սայլ եկն յԵրուսաղէմայ ի Վարդապետէն, որ եկեալ է ի Մսրայ, որ է Սիմոնն։

Եւ լու եղև ի քաղաքիս՝ եթէ ծառայք թագաւորին որ կային առ վէզիրիւն, բարկացեալ յարձակին ի վերայ Նորա, եւ նա մազապուրծ փախուստ առեալ ի բերդ[1]) կղզոյն մտանէ և զյէնկիչէր աղասին և զքեհեա պէկն կտրատեն։ Մուհէրրէմ ասի։

Դշի[2]) (30 Սեպտ.) գիշերիս անձրև էր յերեկոյէն մինչև առաւօտ։ Զբոզք յէշս եդին։

Եւ Ուրբաթի (2 Հոկտ.) ևս։ Օրս Ռուհիճանն ժողով արար չարեացն և առ զմուհասէպէն Ցարութենէն։

Շաբաթ (3 Հոկտ.). ել գնաց ի Պողազն առ վէզիրն։ Վանցի Աստուածատուր վարդապետն եկաւ, կամէր յեկեղեցիսն մտանել, ոչ թողին։

Կիրակի (4 Հոկտ.). ի Պարմաղափուն գողոց զձեռս և զոտս ջարդեցին։ Եւ մանզուլ արարին զմեր էֆէնտին ի Մսրայ։

Դշի (7 Հոկտ.). երեկոյիս ել և գնաց մայր թագաւորին ի բանակէ անտի և յետ ժամուց երկուց գնաց և թագաւորն։

Որ առաւօտուս Եշի (8 Հոկտ.) և մուտ Նաւասարդի՝ Գաբրիէլ վարդապետն եկն ասա։ Եւ անձրև գայր յօրէս մինչ ի Կիրակիս, մերթ գայր և մերթ բանայր ԺԲ–իս։

Եշի (15 Հոկտ.). ի Պողազէն մերայնոցս մարդ եկն։

Եւ մինչև յՈւրբաթս (16 Հոկտ.) ապա արգելաւ անձրևն և բացաւ. նօտոս էր։

Կիրակի ԺԸ[3]). թուղթ եկն մեզ ի կաթողիկոսէն Մաչատարոյ զոր ձեռնադրեալ են Ցուլիսի ԺԷ։

Գշի (20 Հոկտ.). երեկոյին խաղող առաք։

1) բերթ. 2) Հոկտեմբեր ամիս օր Դշի. 3) ԺԹ.